

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

### Մասնագիտությունը

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

### Մոդուլի անվանումը՝

«Սանիտարիայի և հիգիենայի պահպանում»

# Արդյունք 1. Պահպանել սանիտարիայի նորմերը

## Թեմա 1.1 Սանիտարիայի նորմերը

Վարսահարդարման սրահներում սանիտարիայի նորմերը ենթարկվում են մի շարք պահանջների: Սանիտարիայի նորմերի պահպանումից է կախված հաճախորդի և վարսահարդարի առողջությունը, անվտանգ գործունեությունը և աշխատանքի լավ կազմակերպումը: Սանիտարիայի նորմերի պահպանումը պաշտպանում է տարբեր մաշքային և իմունային հիվանդություններից: Վարսահարդարի և հաճախորդի առողջությունը, գործիքների մաքրությունը, աշխատանքային տարածքի մաքրությունը՝ սանիտարիայի նորմերի հիմնական նախապայմաններից են:

Վարսավիրական սրահները պետք է ունենան սպասասրահ, աշխատանքային դահլիճ, աշխատողների զգեստափոխման սենյակ և սանհանգույց: Մեկ սրահը կարող է ունենալ 3 աշխատանքային տեղ՝ վարսահարդարության համար, և 1 սեղան՝ մատնահարդարության համար: Յուրաքանչյուր սրահի առաստաղի բարձրությունը պետք է լինի 2.7-3 մ և ավելի, աշխատանքային տեղը պետք է լինի 4.5 մ<sup>2</sup>-ից ոչ քիչ, աթոռների միջև հեռավորությունը՝ 1.5մ<sup>2</sup>: Սրահը պետք է ունենա տաք և սառը ջուր, սանհանգույց, օդափոխման համակարգ: Սրահի ջերմությունը պետք է լինի 18-20°C, լուսավորվածությունը՝ 200 լյուկսից ոչ քիչ: Անհրաժեշտ է պահպանել յուրաքանչյուր սենյակի մաքրությունը, լուսավորվածությունը և դասավորվածությունը: Սանիտարիայի նորմերի խախտումը կամ չպահանումը կհանգեցնի այնպիսի հետևանքների, որոնք են՝ հիվանդությունների տարածումը մի հաճախորդից մյուսին, աշխատանքի սխալ կազմակերպման, տհաճ մթնոլորտին, հաճախորդի անվստահությանը:

### Հարցեր.

Ինչո՞ւ է հարկավոր սանիտարիայի նորմերի պահպանումը:

---

---

---

Ինչպիսի՞ վտանգներ կան սանիտարիայի նորմերի խախտման դեպքում:

---

---

---

Գեղեցկության սրահների դասավորվածությունը



**Թեմա 1.2 Տարբեր իրավիճակներում սանիտարիայի նորմերի պահպանում**

Սանիտարիայի նորմերի պահպանումը իր մեջ ներգրավում է աշխատանքային տարածքի, աշխատանքային սեղանի, վարսավիրական գործիքների, սարքավորումների, համազգեստի, սրբիչների և անձեռոցիկների մաքրությունը: Աշխատանքային տարածքի և աշխատանքային սեղանի մաքրությունը պահպանել նշանակում է հականեխել հատուկ լուծույթներով հատակը, պատուհանագոգերը, աթոռները, հանելիները, սեղանները:

Վարսահարդարը սանիտարիայի նորմերի պահպանումը կատարում է աշխատանքային տարածքի հատակի մաքրումով, գործիքների հականեխմամբ, օգտագործված սրբիչների և ծածկոցների փոխարինումը նորերով, աթոռների և դարակների հականեխմամբ և ձեռքերի լվանալով:

Վարսավիրական գործիքների մաքրումը հարկավոր է կատարել յուրաքանչյուր աշխատանքի ավարտից հետո՝ պատրաստելով համապատասխան լուծույթներ հատուկ այդ նպատակով նախատեսված ամաններում/օրինակ՝ սանրները և ամրակները/ կամ սրբել սպիրտային լուծույթով/օրինակ՝ մկրատները/:

Համազգեստը պետք է լինի մաքուր իսկ սրբիչները՝ լվացված, հականեխված, դրված մաքուր պահարաններում: Լվացագոգը՝ հաճախորդի մազերը լվանալուց առաջ, պետք է մաքրել ախտահանող լաժույթով, այնուհետև լվանալ մազերը: Մազերը կտրելուց անմիջապես հետո հավաքել և լցնել աղբամանը: Օգտագործված սրբիչները առանձնացնել հատուկ ամանի կամ պահարանի մեջ լավանալու համար: Այն հաճախորդները, որոնք ունեն տեսանելի մաշկային հիվանդություններ, նրանց չի կարելի սպասարկել՝ պատճառաբանելով հենց հիվանդության գոյությունը և խորհուրդ տալ դիմել բժշկի:



Մրահի լուսավորվածությունը և օդափոխման համակարգը նույնպես ունեն կարևոր նշանակություն սանիտարիայի նորմերի պահպանման հարցում: Լուսավորվածությունը հարմար է անել նեոնային լամպերի միջոցով, քանի որ դրանք տալիս են բնական լույսի նման լույս, ինչպես նաև էլեկտրոնեքտրոնային: Օդափոխումը հարկավոր է ապահովել անխափան, քանի որ

մատուցվող ծառայությունների մեջ մտնում է քիմիական նյութերով աշխատանք քիմիական զանգրացման և ուղղման, ինչպես նաև մազերի ներկման և հարդարման ժամանակ:

**Հարցեր.**

Ինչպե՞ս պահպանել սանիտարիայի նորմերը:

---

---

---

Ի՞նչ հետևանքներ կունենա նորմերի խախտումը:

---

---

---

### **Թեմա 1.3 Օգտագործվող հիմնական ախտահանող նյութերի դասակարգում**

Վարսահարդարման սրահներում օգտագործում են քիմիական կամ ֆիզիկական ախտահանման մեթոդները: **Քիմիական** մեթոդը՝ դա գործիքների և այլ պարագաների ախտահանումն է սպիրտով, քլորամինով, ինկրասեպտով, տրիացիդով և այլն: Հականեխումը կատարվում է գործիքների թջելով, ընկղմելով լուծույթի մեջ այնուհետև խոզանակով մաքրել ջրի տակ: Սպիրտի լուծույթը պատրաստվում է 70%-ոց սպիրտից: Այն լցվում է ամանի մեջ, որը պետք է փակվի կապարիչով և օգտագործվի 150 անգամից ոչ շատ: **Ֆիզիկական** մեթոդը՝ դա 0.5%-ոց օձառի և եռեցած ջրով լուծույթով լվանալն է և կրակի վրա հականեխելը: Երկու մեթոդներից հետո գործիքները մաքրում են խոզանակով և տաք հոսող ջրի տակ:

#### **Հարցեր.**

Ինչպիսի՞ նյութեր են օգտագործվում ախտահանման ժամանակ:

---

---

---

Ինչպիսի՞ ախտահանման մեթոդներ են օգտագործվում:

---

---

---

### **Թեմա 1.4 Ախտահանող նյութերից լուծույթների պատրաստում**

Յուրաքնչույր լուծույթ պատրաստելուց առաջ հարկավոր է գնահատել գործիքի կամ տարածքի կեխտոտվածության աստիճանը: Համապատասխան լուծույթի օգտագործումը կատարվում է նրա պիտակի վրա նշված չափերով և նպատակին համապատասխան: Մկրատների հականեխումը կատարվում է սպիրտի 70%-ոց լուծույթով կամ սպիրտով թրջված բամբակով մկրատի շեղբերը, օղակները սրբուլով:

Սանրերի հականեխում.

Օձառի 0.5%-ոց լուծույթի մեջ դնել գործիքները 30 րոպե, հետո լվանալ խոզանակով և տաք ջրով, կամ քլորամինի լուծույթի մեջ պահելուց 15-20 րոպե հետո, նույնպես խոզանակով և տաք ջրով: Աշխատատարածքի մաքրումը կատարվում է այդ նույն սպիրտային լուծույթով: Սրբվում է այծոռը, դարակները, հատելու դարակը:

#### **Հարցեր.**

Ինչպե՞ս է պատրաստվում ախտահանվող լածույթը սանրը մաքրելու համար քիմիական մեթոդով:

---

---

---

Ինչպե՞ս է պատրաստվում ախտահանվող լածույթը սանրը մաքրելու համար ֆիզիկական մեթոդով:

---

---

---

Ինչպե՞ս է ախտահանվում մկրատը:

---

---

Ինչպե՞ս ապահովվել աշխատանքային տարածքի և սենյակի մաքրությունը:

---

---

## Արդյունք 2. ՊԱՀՊԱՆԵԼ ՀԻԳԵՆԱՅԻ ՆՈՐՄԵՐԸ

### Թեմա 2.1 Անձնական հիգիենայի նորմերը

Վարսավիրական ծառայություններ մատուցելը իր մեջ պարունակում է հիվանդությունների տարածման մեծ հնարավորություն: Այդ իսկ պատճառով վարսավիրի անձնական հիգիենայի պահպանումը շատ կարևոր է և անհրաժեշտ: Աշխատաքի ընդունվելուց առաջ ամբողջ անձնակազմը պետք է անցնի հետազոտություն և ամենահավանական հիվանդությունների համար տալ անալիզներ (գրիպ, մաշկավեներական հիվանդություններ): Ձեռքերը՝ յուրաքանչյուր հաճախորդից հետո աշխատելուց առաջ և հետո լվանալ օձառով և խոզանակով, վնասվելու դեպքում անհրաժեշտ է հականեխել և բուժիչ քսուկներ քսել, իսկ մաշքային հիվանդությունների դեպքում՝ աշխատել չի կարելի: Այս գործընթացը պետք է կատարել պարբերաբար: Դրանից բացի վարսավիրը պետք է ամեր օր լոզանք ընդունի, մազերը լինեն մաքուր, օգտվի հակաքրտնեցնող միջոցներից (դեզոդորանտներ և անտիպեսպերանտներ), ունենա հաճելի տեսք, ձեռքերը լինեն մաքուր, մատները հարդարված առանց մատանիների, ժամացույցի, թնոցների (ցանկալի չէ երկար եղունգներով և վառ գույնի մանիկյուրով, քանի որ այն վարաքի տարածման պատճառ կարող է լինի), մշտապես մաքրել ատամները և ողողել բերանը ուտելուց հետո:

### Հարցեր.

1. Ինչո՞ւ է անհրաժեշտ պահպանել անձնական հիգիենայի կանոնները:

---

---

---

2. Ինչպիսի՞ անձնական հիգիենայի կանոններ պետք է պահպանի վարսավիրը:

---

---

---

3. Ինչպիսի՞ հիվանդությունների տարածման վտանգ կա հիգիենայի կանոնները խախտելու դեպքում:

---

---

---

**Թեմա2.2 Աշխատաքային հիգիենայի նորմերը**

Աշխատանքային հիգիենան սկսվում է աշխատանքային սենյակի և տարացքի մաքրությունից: Պետք է աթոռները, սեղանները յուրաքանչյուր հաճախորդից հետո սրբել խոնավ անձեռոցիկով, իսկ աշխատանքի ավարտից՝ հետո 1%-ոց քլորամինի լուծույթի մեջ թրջված անձեռոցիկով ամբողջ աշխատանքային տարածքը:

Չի կարելի աշխատել այն հաճախորդի հետ որը հիվանդ է կամ ունի վնասվածքներ,որոնք թարախակալված են, բորբոքված են , այտուծված են:

Անրաժեշտ է հետևել գործիքների մաքրության պահպանմանը,ունենալ երկու գործիքների աշխատանքային հավակածու և մեկ պահուստային(եթե խափանման դեպքեր լինեն):Աշխատանքի ավարտից հետո աշխատած հավակածուն դնում են հականեխման,աշխատում երկրորդ՝ մաքուր հավակածույով:Նաև պետք է փոխել ծածկոցները յուրաքանչյուր հաճախորդից հետո:Հարկավոր է ունենալ անհրաժեշտ քանակությամբ մաքուր և հականեխված սրբիչներ, դրված պահարանում:

**Հարցեր.**

Որո՞նք են աշխատանքային հիգիենայի նորմերը աշխատանքային տարածքի և սեղանի պահպանման համար:

---

---

---

Որո՞նք են աշխատանքային հիգիենայի նորմերը գործիքների պահպանման համար:

---

---

---

Որո՞նք են աշխատանքային հիգիենայի նորմերը հաճախորդի հետ աշխատելիս:

---

---

---

**Թեմա2.3 Հիգիենայի նորմերի պահպանում տարբեր իրավիճակներում**

Հիգիենայի նորմերը տարբեր իրավիճակներում հարկավոր է պահպանել ամենայն ճշտությամբ:Աշխատանքային տարբեր իրավիճակներում կարող են առաջանալ դեպքեր,երբ թե վարսավիրի և թե հաջախորդի համար շատ կարևոր է պահպանել հիգիենայի նորմերը:Հաջախորդի գլխամաշքը , ականջը վնասելու դեպքում,վարսավիրի մատները կամ ձեռքը վնասելու դեպքում պետք է 3-6%-ոց ջրածնի պերոքսիդի լուծույթով մշակել վնասվածքը:Այն ուշ է կանգնեցնում արյունը ,սակայն վարաք տարածելու վտանգ չի ներկայացնում:Չի կարելի օգտագործել հականեխման նպատակով վարսահարդարման մեջ երկաթի քլորիդ-այն մուգ դեղին գույնի լուծույթ է բնորոշ հոտով:Այն թողնում է դեղին հետքեր սրբիչների վրա,այդ պատճառով չի օգտագործվում:

**Հարցեր.**

1. Ինչպե՞ս պետք է մշակել վնասված մաշքը:

---

---

---

2. Ինչպիսի՞ լուծույթ է օգտագործվում վնասված մաշքը մշակելու դեպքում:

---

---

---

3. Ինչպիսի՞ լուծույթներ չի կարելի օգտագործել :

---

---

---



